# Տեղական լուրեր

## Նէկիպ - Շիշէկլի տեսակցութեան շուրջ

ԴԱՄԱՍԿՈՍ.— Կարգ մը թերթեր Երուսաղէմի բամբասանքներէն առնելով յայտարարած էին, թէ Եգիպտոսի Հանրապետութեան նախագահ, Զօր. Նէկիպ և Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Զօր. Շիշէքլի Սեպտեմբերի 27ին տեսակցութիւն մը պիտի ունենան Ղազզէի մէջ, որուն ներկայ պիտի ըլլայ Յորդանանի վարչապետը։

Պաշտօնական շրջանակներ հերքեցին այս լուրը։

## Կուսակցութեանց նոր օրէնքը

ԴԱՄԱՍԿՈՍ.— Ներքին Գործոց նախարարը յայտարարեց թէ կուսակցութիւններու օրէնքին ուսումնասիրութիւնը աւարտած ըլլալով, պաշտօնաթերթին ղրկուելու է ի հրատարակութիւն, և յառաջիկայ շաբթուան սկիզբը հրատարակուած կ'ըլլայ, ու գործադրութեան կը դրուի։

Լաւատեղեակ շրջանակներու համաձայն կուսակցութիւններու նոր օրէնքը 80 յօդուածներէ կը բաղկանայ, ուր արտօնութիւն կը տրուի պաշտօնեաներուն և ուսանողներուն քաղաքականութեամբ զբաղելու։

(Շարունակութիւն Ա. էջէն)

հաւանականութիւնը, մի քանի ամսէն, ինչո՞ւ համար այժմ կը յամառին զինադադար կնքելու։

«Շատ լաւ չենք հասկնար— կ'եզրակացնէ Լէգոր Մերթը — չենք կրնար հասկնալ նաեւ թէ ինչպէս պր. Տալեսի պէս մեծ անձնաւորութիւն մը, անզգամաբար խոստում կ'ընէ պր. Րիի հետ հանդիպում ունենալու զինադադարէն յետոյ Փանմունչոմի մէջ և Թուականի մէջ (որո՞ւ կողմէ որոշուեցաւ)։

Յառաջ չենք երթար մինչեւ երկիրներութիւն մակարդակելու, բայց պէտք է ընդունիլ որ ամերիկեան քաղաքական յարաբերութիւնները խառնակ են և նոյնիսկ տանելի ծայրին։

Այդպիսի զինադադարի կնքումը, կը խոստանա՞յ այն միաժամանակ պէտս գոր անպատճառ ճամբորդները կը հետապնդեն ընդ վայր։

Ամերիկեան տարակարծութիւնները ե՞րբ պիտի հարթուին։

ԼԵՒՈՆ ԹՈՒԹՈՒՆՃԵԱՆ

## Ազգ. Վարդանեան վարժարան
### ՏԱՎՈՒՏԻԷ—ՀԱԼԵՊ

Վարդանեան վարժարանի հոգաբարձութիւնը պէտք ունի Փոլէնական կրթութիւն ունեցող ուսուցիչ—ուսուցչուհիներու։

Փափաքողներ թող դիմեն պարոն Անի, Թիլէ, իսկ Տավուտիէ՝ Պր. Կարապետ Արօյեանին։

Վարդանեան վարժարանի անձնագրութիւններ պիտի սկսին Սեպտ. 16ին, Տավուտիէի եկեղեցիին մէջ։

Դասաւանդութիւններ կը սկսին Սեպտ. 28ին։

Տավուտիէի Հոգեւոր Հովիւ և
Վարդանեան վարժարանի Տնօրէն՝
ԵՂԻՇԷ ՔՀՆՅ. ՓԱՆՈՍԵԱՆ

## ՍՈՒՐԻՈՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ 82 ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

ԴԱՄԱՍԿՈՍ — Ն. Վ. Հանրապետութեան նախագահ Զօր. Շիշէքլի, թիւ 287 հրամանագիրը ստորագրեց, որու համաձայն Սուրիական Խորհրդարանի երեսփոխաններուն թիւը 82պիտի ըլլայ։ Ասոնցմէ 9ը ոչ իսլամ և 4ը փոքրամասնութիւն։


## ՎԵՐԱԲԱՑՈՒՄ
### ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ
### 1953 – 54 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆ

Հայր Սիսիի և Նոր-Դիւղի Կիլիկեան Վարժարաններու աշակերտական արձանագրութիւնները կը սկսին Չորեքշաբթի 16 Սեպտեմբեր 1953ին, և կը շարունակուին ամէն առաւօտ ժամը 8—12:

Կանոնաւոր դասաւանդութիւնները կը սկսին Երկուշաբթի 21 Սեպտեմբերի առաւօտուն:

Բոլոր պաշտօնեաները պարտաւոր են դպրոց ներկայ գտնուիլ Երկուշաբթի 21 Սեպտեմբերին:

Մեծ կարեւորութիւն կը տրուի և լուրջ աշխատանք կը թափուի դպրոցներ նախորդ տարիներէն աւելի բարձր մակարդակի մը հասցնելու համար:

Տարեվերջին, աւարտական կարգերու երկսեռ աշակերտներ ի վիճակի պիտի ըլլան ներկայանալու ՊԵՏԱԿԱՆ ՍԵՐԹԻՖԻՔԱՅԻ,

Հայր-Սիսիի Կիլիկեան Վարժարանը ունի օրօրի ապաստարկութիւն հեռաւոր թաղերու համար:

Յարգելի ծնողներ կը հրաւիրուին օր առաջ արձանագրելու իրենց զաւակները, որպէսզի անոնք չզրկուին սկզբնական շրջանի դասաւանդութիւններէն և տեղի չտան անկանոնութեանց:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ



ناس

المكتب الوطني للدعاية




ՆԱՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

«ՍՈՒՐԻԱ»ի մէջ ձեր յայտարարութիւններուն համար դիմեցէք, ՆԱՍ ծանուցումի գործակալութեան, Պարոն Պաղտատ, Պլիւտ «Տ'օրիան»ի վրայի յարկը, հեռաձայն 14505։

Գործի յաջողութեան առաջին պայմանն է ծանուցումը.

Այս անժխտելի իրողութեան ի տես, անվարան դիմեցէք ՆԱՍ ծանուցումի գործակալութեան, ուր ապահովուած պիտի գտնէք ձեր յայտարարութիւնները, սինեմաներու պաստառներուն վրայ, ինչպէս նաեւ թերթերու մէջ:

NATIONAL ADVERTISING SERVICES



ՇԷԼ

ՊԻՒԹԱԿԱԶ

ՁԵԶ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՐԺԵԼՈՒ ՏԻԿԻՆ

ՓԱՍՏՈՒԵՑԱՒ, ՈՐ ՇԷԼ ՊԻՒԹԱԿԱԶԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ Է:




Նկատի առէք հետեւեալ առաւելութիւնները.—

- Խոհանոցիս ՊԻՒԹԱԿԱԶի սիսը կը պարունակէ 12,5 քիլօ կազ ✓
- Այլեւս ապահովագրութեան ծախսեր պիտի չունենամ, խոհանոցիս սիսի եւ ննջման ժամացոյցի տարեկան 5 Սուր. Ոսկի, Ճենանակաւոր ✓
- Անկարգ սիսը մը կարելի է ձեռք անցնել 15 Ս.Ո. տարեկանով ✓
- Ծանուցողներու պաշտօնեայներն երկարի կ'առնուին ծրագրար, ամէն օր առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան ժամը 7ը, բացի Ուրբաթ օրերէն, որ 8էն մինչեւ կէսօրէ վերջ ժամը մէկ ✓
- Օգի շատ հեռաւոր և փարձուած բարեկամական կազմակերպիդ կը կազմեն ՊԻՒԹԱԿԱԶի գործածման ապահովութեան գլխաւոր սակարգները ✓

5

ԱՅՍ ՀԻՆԳ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՁԵԶ ԿԸ ՄՂԵՆ ԳՈՐԾԱԾԵԼ

ՇԷԼ ՊԻՒԹԱԿԱԶԸ

-Նաս- որ ձեր հանգստութեան համար անհրաժեշտ է. Պրատ



ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ցուցահանդէսին վիճակահանութիւնը

ՈՐՈՒՆ ՊԱՐԳԵՒՆԵՐՈՒՆ ԳՈՒՄԱՐՆ Է 45000 Ս. ՈՍԿԻ

ՄԵԾ ՊԱՐԳԵՒԸ 25000 Ս. ՈՍԿԻ

«ԹԻՐԱԺԸ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ 12 ՍԵՊՏ. 1953»

ԱՅԺՄԷՆ ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ՁԵՐ ՏՈՄՍԵՐԸ, ԲՈԼՈՐ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԱԿ ԾԱԽՈՂՆԵՐԷՆ


## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 355 |
| Սթերլին | 950 |
| Ֆրանսական 1000 Ֆրանք | 900 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 840 |
| Յորդանանեան | 925 |
| Տինար | 955 |
| Թրքական | 60 00 |
| Լիբանանեան | 108.50 |

ՈՍԿԵԴՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 34 50 |
| Օսմ. Րէշատի | 31,50 |
| Օսմ. Թիւնարի | 27,50 |


ՀԱՃԻ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԷԼ ՖԷԼԼԷՔԻ



ՖԱՔԻՐ—ԱՍՏՂԱԳԷՏ
ՄԱՍՆԱԳԷՏ ՔՆԱՑՆՈՂ ԵՒ ՈԳԵՀԱՐՑ
Քէլլէսէ Պօղոսայ, Կարած խաուսամ
Հեռաձայնի թիւ 12271


ՏՊԱՐԱՆ «ՆԱՅԻՐԻ»
ՀՈԳԵՏՈՒՆ - ՀԱԼԷՊ